

նկարագրում է յունական ապստամբութեան մէջ կարևոր դեր կատարած այս երկու երեղթների ծագումն ու պատմութիւնը: Շատ հետաքրքրական է Ալի փաշայի աւագակութիւնից վասալական ընդարձակ իշխանապետութեան հասնելու նկարագրութիւնը, յատկապէս նրա մղած պատերազմները ալբանական ծագում ունեցող, բայց քրիստոնեայ Սուլեյմների դէմ: Այս մի բուռն ժողովրդի հայրենասիրական առաքինութիւնն ու քաջութիւնը հին Յունաստանի և Հռոմի հերոսներն է յիշեցնում: Ալին, որ Սուլեյմների ընկճելուց յետոյ՝ յոյների դէմ է արշաւում և Թեսալիայի շարժումը ճնշում, ստիպուած էր ի վերջոյ դաշինք կապել նրանց հետ ընդդէմ Սուլթանի: Այս հանգամանքն էլ նպաստում է 1821 թուի ընդհանուր ապստամբութեան:

Գիրքը կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ, ինչպէս մի վէպ. գրուիչ են յատկապէս հերոսական գործողութիւնների սահուն նկարագրութիւնները: Թարգմանութեան լեզուն կարելի է ընտիր համարել չնչին բացառութիւններով: Խորհուրդ ենք տալիս կարդալ այս գիրքը, որ խրատական է խելահասների և ոգևորիչ մատաղ սերունդի համար:

Գ. Վ. Յովսէփեան

ՊԱՏԱՍԽԱՆ

«Անապատականներ և վանականութիւն» աշխատասիրութեան մատենախօսութեան առիթով, որ գրել է Հ. Երուանդ վարդապետը, հարկ եմ համարում ասել, որ այդ աշխատասիրութեան նպատակը եղել է ցոյց տալ, թէ ինչպէս սկսուեց, զարգացաւ և նսեմանում է անապատականութիւնն ու կրօնաւորութիւնը:

— Յովհաննէս Մկրտչի ծննդեան մասին խնդրեմ կարդալ Ղուկասի աւետարանի առաջին գլուխները:

— Ի նկատի ունենալով «Արարատի» ընթերցողներին մեծագոյն մասը, որ զիւղական քաջանաներն են, խոտակրանութեան զանազան երևոյթները պարզ կայուցանելու համար տուել եմ այդ երևոյթներին, այսպէս ասած, հերոսներին համառօտ կենսագրութիւնը: Այդ բանը, անելու համար, ով էլ որ լինէր, պէտք է դիմէր ամենին մտաշեղի աղբիւրներին, որոնք են. Վարք որդոցները, Հարանց վարքերը, Յայամուռները ևլն: Այդպէս էլ վարուել եմ ես: Իրամամբ էլ անապատականութեան սկիզբը ես դրել եմ Լիդիա մարդարէին, թէև զիտեմ, որ հեթանոս աշխարհում — Հնդկաստանում — ևս օտար չէր միանձնութիւնը: Ես չեմ ուզել եկեղեցական աւանդութիւնից շեղուել:

— Ինձ անհաւանական էր թւում, որ մեր Ս. Ռսկեանք և Սուբխասեանք, որպէս խոտաճարակ ճգնաւորներ, ապրած լինէին Ս. Թադէոս առաքելի օրով, և այն ժամանակը, ինչ որ ցոյց է տալիս եկեղեցական աւանդութիւնը: Խոտաճարակներ երևան են գալիս Գ. զարի սկզբում Միջագետքում և Ասորիքում: Հնչիւնական նմանութիւն զտնելով Ռսկի և ВОСЕН բառերի մէջ, կարծեցի, որ մէկը միւսի հետեւութիւն է. որովհետեւ երկուքն էլ խոտաճարակներ էին: Վստահ չը լինելով իմ ենթադրութեան, դիմեցի Հ. Երուանդ վարդապետին, որպէս մասնագէտի. բայց որոշ պատասխան չստացայ, դիմեցի պ. Մկրտիչ Դէս զարեանին (այժմ՝ քաջանայ) և նրա ենթադրութիւնը մէջ եմ բերել:

— Խոստովանում եմ, որ իմ համար դեռ բոլորովին պարզուած չէ Ռսկեանց և Սուբխասեանց անձնաւորութիւնը: Ժամանակը և ճգնութեան եղանակը, բայց պարզ է, որ նրանք առաջին դարում չէին կարող իրրեւ խոտաճարակ ապրած լինել: Որովհետեւ աւանդութիւնը մեր կրօնաւորութեան սկիզբը դրանց է համարում, հետաքրքիր էր դրանց, որով և հայ կրօնաւորութեան սկզբնաւորութեան, ժամանակը ստոյգ իմանալ: Հ. Երուանդը եթէ կարող է այդ մասին վճռական մի բան ասել ուրախութեամբ և շնորհակալութեամբ կրնալու նեմ:

—Թուականների վերաբերութեամբ վերջին խօսքը դեռ ասուած չէ: Այն, ինչ որ այժմ ուղիղ է կարծւում մի նոր գիւտով կարող է սխալ դուրս գալ: Որտեղ հազար տարի կայ, տասնեակները աննշան են և իմ համար միայն փաստն է առաջնութիւն ունեցողը: Մեծ յանցանք չէ, որ «Ահարատի» և «Հանդէս ամսօրեայի» այս կամ այն թերթը վրիպել է աչքիցս: Տուէք մեզ ամբողջ զիրք, եկեղեցական պատմութիւն ճշտուած, մենք էլ կը հետեւենք:

—Մեր պատմիչները առանձին իմն եռանդով, մեր նշանաւոր մարդկանց օտար ծագումից են դուրս բերում և այդ անհրաժեշտ է. Արծրունիք Ասորեստանից են, Մամիկոնեանք՝ ձեն կամ ձենացի, Ս. Գրիգոր լուսաւորիչը պարսկական պահլաւ, Ս. Հռիփսիմէ և ընկերները՝ հռոմայեցի, բագրատունիք՝ հրեայ: Եւ միթէ զրանք բոլորն էլ օտարազգի էին: Պէտք չէ մոռանալ առածը. «Հեռու տեղի սուրբը զօրաւոր կը լինի»:

—Եթէ եկեղեցին տօնում է Զենոբին, Անտոնին և Կրօնիդէսին, ի՞նչ մեղք կը լինէր, եթէ տօնուէին բուն հայ կրօնաւորները, որոնք ըստ փաւստոսի, պատմական անձինք են և քրիստոնէական կրօնքը ժամանակի ոգուն համեմատ փառաւորողներ:

—Հ. Երուանդը ոչ միայն աւելորդ է համարում իմ աշխատասիրութիւնը, այլև տեղ տեղ զուարճալի է գտնում Սուկաւէտի մասին բացատրութիւնը:—Ես դարձեալ կըրկնում եմ. Դեօսա—դադ լերկ լեռն է նշանակում և ոչ քօշի—այծի սար՝ առնչութեամբ քօշ կոչուող Սուբիասեանց:

—Եթէ Մեծն Բարսիլը մտքեց Կապադովկիա վանական կրօնաւորութիւնը, Ս. Լուսաւորչի օրով Հայաստան եկած անապատականները կարող էին Ասորիքից և Միջագետքից լինել, Անապատականութիւնը եգիպտոսից անցաւ Պաղեստին, վանականներն ու անապատականները այդ տեղից անցան Ասորիք, Միջագետք և Հայաստան: Այդ է ուղիղ ճանապարհը:

—Մենք Ղազար փարպեցու թղթից այն եզրակացու-

թիւնը հանեցինք, ինչ որ գրել ենք—նա իւր եռանդը, տաղանդը սպառել է ուրիշներին դատաւիտելով, չը հաւանելով, խծբծելով:

Խնդրեմ կարգալ Ղաղարի թուղթը:

—Այժմ ևս կրկնում եմ, որ սկզբում կար եպիսկոպոս, երէց և սարկաւազ. (Պօղոս առաք. առ Տիտոս, Տիմոթէոս): Ե. դարում սկսուեց երէցների մի մասի ամուրիութիւնը, որը իւրացնելով կրօնաւորի սքեմը, կոչւում է վարդապետ: Իսկական կրօնաւորը ոչ մի աստիճան չունէր և պէտք է չունենայ:

—Ամուրիութիւնը մինչև Ե. դարը պարտաւորական չէր: Թողնենք Ս. Լուսաւորչին և նրա որդիքն ու թոռները, Գրիգոր Աստուածաբանի հայրը ամուսնացած եպիսկոպոս էր:

—Ճշմարիտ է. երեք տարի առաջ նկատելով, որ Հ. կարապետ վարդապետը եկեղեցում մի երկու տեղ այլ կերպ է կարգում, ես պնդում էի, որ ինքնակամութիւն թոյլատրելի չէ: Այժմ ևս նոյնը կասեմ: Քննել և ճշմարտութիւնը վերականգնելուն ձգտելը պարտք է. բայց քանի որ այդ կարծուած ճշմարտութիւնը բոլորից ընդունուած և որոշեալ կարգով սրբագործուած չէ, պէտք է ինքնակամօրէն չը գործադրուի. որովհետև ինքնակամութիւնը պառակտումն կարող է առաջ բերել: Ասելով թէ, եթէ վարիչ հոգեւորականութիւնը ամուսնացած լինէր եկեղեցին չէր տուժի, իսկոյն էլ չեմ գործադրել ասածս: Ուրեմն չեմ հակասել ինձ: Այս մէկ: Մէկ էլ որ ամուսնութեան վերաբերութեամբ մեր ասածը կանոնական խնդիր է, Հ. կարապետ վարդապետի ասածը և գործադրածը հաւատի և դաւանութեան: Վերջապէս յայտնի խնդրի առիթով իմ և կարապետ Հայր սուրբի առարկութիւնները տպուած են «Արարատում» և «Լումայում»: Իմ առարկութիւնը վարիչ հոգեւորականութեան ամուսնութեան մասին յայտնի է: Հերքեցէք ասածս և ապացուցեցէք, որ վարիչ հոգեւորականները միշտ էլ ամուրի են եղել, և եկեղեցին կը տուժի, եթէ ամուսնանան:

—Հենց այժմ վանականութիւնն ու կրօնաւորութիւնը

իրանց կարգ ու կանոններով պատմական անցքերի շարքն են անցել և զաղարել են գոյութիւն ունենալուց: Այդ բանին համոզուելու համար հարկաւոր է մեր վերայ և մեր շուրջը նայել: Ի՞նչ է այժմ վաճախանութիւնը:

— Ըստ առածին՝

«Անհոգի կեանք»

«Անփառունակ փառք»

«Անկարեկից եղբայրութիւն»:

Յուսիկ Աբեղյանկոպոս.

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

Յուսիկ սրբազանը կարեւոր է համարել մեր մատենախօսական յօդուածին բաւական ընդարձակ պատասխան տալ. «Արարատի» խմբագիր Տ. Կարեգին վարդապետը ուղարկելով մեզ այդ պատասխանի սրբագրութիւնը, խնդրում է մի քանի խօսքով մեր ասելիքն ասել ու հարցը փակել:

Շատ դժուար է խկապէս այդ «պատասխան»ի մասին խօսք ասելը, նրա մէջ շատ բաներ մեզ ամենեւին չեն վերաբերում և գործի հետ էլ ոչ մի առնչութիւն չունին. օրինակ Յուսիկ սրբազանը յիշում է, որ Ոսկեանց մասին իմ կարծիքը հարցրել է, բայց որոշ պատասխան չէ ստացել. չիմացածս բանի մասին չէի կարող ի հարկէ ուրիշին հաստատուն տեղեկութիւններ տալ: Որ ամենքս անուպատականների մասին գրելիս Յայտնաւորները պիտի արտագրէ, այդ Յուսիկ եպիսկոպոսի վճիռն է, որին կարծեմ չի ենթարկուելաւ. ոչ ոքս Բայց սոքա մանր խնդիրներ են. Յուսիկ սրբազանը այնպիսի բաների վրայ է սնդում իւր «պատասխան»ի մէջ, որ կարդացողը դարձանցած է մնում: Որ Յուսիկ սրբազանը ինձ խորհուրդ է տալիս կարդալ